

**ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, Բ.Գ.Պ. պրոֆեսոր

_____ Գ.Խաչատրյան

“ _25_ ” __05_____ 2012թ.

Կ ա ղ զ

***Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի
աշխատակիցներին և ուսանողներին դրամական օգնություն, աջակցություն,
պարգևատրում տալու***

Հաստատված է

ՎՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից

(արձանագր. թիվ _8_ “ _18_ 09_ 2009թ.)

Փոփոխված է (արձանագրություն թիվ 8 “_08_” __10__ 2010թ.)

Փոփոխված է (արձանագրություն թիվ 4 “_29_” __04__ 2011թ.)

Փոփոխված է (արձանագրություն թիվ 4 “_04_” __04__ 2012թ.)

1.4. կետը ընդունվել է՝ (արձանագրություն թիվ 5 “_25_” __05__ 2012թ.)

Սույն կարգով սահմանվում է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի աշխատակիցներին և ուսանողներին ինստիտուտի կողմից դրամական օգնության ու աջակցության հատկացման և պարզևատրում տալու դեպքերը, գումարների չափերը և աղբյուրները:

I. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՎՈՒՄ Է.

1. Աշխատակիցներին.

1.1. աշխատակցի մահվան դեպքում- 100.000 դրամ՝ աշխատակցի ընտանիքին,

1.2. աշխատակցի ընտանիքի անդամի մահվան դեպքում- 50.000 դրամ,

1.3. աշխատակցի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի կամ ծանր հիվանդության դեպքում, որոնց հետևանքով անհրաժեշտ է երկարատև բուժում կամ թանկարժեք դեղորայք- 30.000 դրամ՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

1.4. Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ին մինչև 12 տարեկան երեխաներ ունեցող ինստիտուտի հիմնական աշխատակիցներին տալ դրամական աջակցություն յուրաքանչյուր երեխայի համար 5.000 դրամի չափով:

/1.4. կետը ընդունվել է 25.05.2012թ. գիտական խորհրդի թիվ 5 նիստում/

2. Ուսանողներին.

2.1. Փոխատեղման արդյունքում առաջին վճարովի և բարձր առաջադիմությամբ (քննաշրջանը գերազանց գնահատականներով ամփոփած) սովորող ուսանողին ուսման վճարի մասնակի փոխհատուցում մինչև 50% չափով՝ տվյալ ուսումնական տարում՝ մեկ կիսամյակի համար:

/կողմնակալ է 08.10.2010թ. գիտական խորհրդի թիվ 8 նիստում/

/կողմնակալ է 04.04.2012թ. գիտական խորհրդի թիվ 4 նիստում/

2.2. ՎՊՄԻ առկա ուսուցման համակարգում սովորող և առաջին անգամ ամուսնացող ամուսնական զույգերին՝ 50.000 դրամ միանվագ աջակցություն, երեխա ունենալու դեպքում՝ ևս 50.000 դրամ միանվագ օգնություն,

2.3. **Բուրդ այն ուսանողներին**, որոնք ունեն առողջական լուրջ խնդիր՝ 15.000 դրամ՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, մեկ տարվա ընթացքում

/կողմնակալ է 29.04.2011թ. գիտական խորհրդի թիվ 4 նիստում/

II. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՏՐՎՈՒՄ Է.

1. Ինստիտուտի հիմնական աշխատակցին (բուհում 10 տարուց ավելի աշխատանքային ստաժ ունեցող)՝ 40 և դրանից բարձր տարիքի հորեյլանական ծննդյան տարեթվերի առթիվ-

մինչև 60.000 դրամ աշխատավարձ ստացող աշխատակցին՝ 60.000 դրամ, մյուսներին՝ իրենց աշխատավարձի չափով:

2. Հիմնական աշխատաժամանակից դուրս ծառայողական պարտականությունների հետ կապված և նախապես հիմնավորված լրացուցիչ աշխատանքների կատարման համար՝ մինչև 50.000 դրամ գումարի չափով՝ ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:

3.1. Գիտության և սպորտի բնագավառում, հանրապետական և ավելի բարձր մակարդակի առարկայական օլիմպիադաներում և մրցույթներում մրցանակային տեղ շահած ուսանողին՝ մինչև 30.000 դրամ:

3.2. Գիտության և սպորտի բնագավառում, հանրապետական և ավելի բարձր մակարդակի առարկայական օլիմպիադաներում և մրցույթներում մրցանակային տեղ շահած ուսանողի ղեկավարին՝ մինչև 30.000 դրամի չափով, եթե ղեկավարումը ներառված չէ նրա ուսումնական բեռնվածքում:

4. ՎՊՄԻ ուսանողական և այլ միջոցառումներին ակտիվորեն մասնակցող, իրենց գործնեությամբ ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստող ուսանողներին-10.000 դրամով՝ ուսանողական խորհրդի և համապատասխան ղեկանառի համատեղ առաջարկությամբ (ֆինանսական տարվա վերջում)¹:

¹) Դրամական օգնության, աջակցության և պարգևատրման վերոնշյալ թվային չափաքանակները, ֆինանսական միջոցների հնարավորության սահմաններում, կարող են փոփոխվել ՎՊՄԻ գիտխորհրդի որոշումով: